մը կ'առնու, կ'ուռի, աւելի ողորկ կ'ըլլայ և փայլուն և քան պառաջինն հինգ անգամ դիմացկուն. հինգ օր կը տևէ այս գործողութիւնը ։

Սարգի մետաքսին 1 հազարագրամը առնուազն կ'արժէ 2000 փրանկ ։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Մարմարիոնի բծերն հանելու կերպ մի ։ Ամենայն դիւրութեամբ կրնամք հանել մարմարիոններու բծերն, մինչդեռ այսկից առաջ յետ բազում աշխատութեանց՝ անոնց բծերն կը մնային և չէին ելներ։ կ'առնումք 60 գրամ քլոռուրի կրոյ (chlorure de chaux), կը խառնեմք զայն մի լիտր ջրոյ մէջ և սպունգով մը կը քսեմք այս հեղանիւթը մարմարիոնի բծերուն վրայ. երկու ժամ վերջը պաղ ջրով կը լուամք մարմարիոնը և լաւ կը չորցընեմք. եթէ առաջին անգամ չելնեն բծերը, երկրորդ անգամ կը կրկնեմք փորձը, և ամենէն վերջը կտաւատի իւղ քսելով բծերուն վրայ՝ բոլորովին կը մաքրուի մարմարիոնը ։

Ջնջումն վնասակար խոտոց ։ Մշակութեան վնասակար խոտերը ջնջելու համար այժմ եւրոպացի երկրագործք նոր դեղ մի կը գործածեն ։ 120 լիտր ջրոյ մէջ 12 հազարագրամ կիր, 2 հազարագրամ փաշիացեալ ծծումբ լեցընելով կը տաքցընեն զայն. և քիչ մը խառնելէն վերջը կը թողուն որ հանդչի հեղանիւթը ։ Յետոյ կ'առնուն ուրիշ 120 լիտր ջուր և ասոր հետ կը խառնեն վերոյիշեալ պատրաստուած հեղանիւթը ։ Անձրև չեկած օր մը երբ օդը պայծառ է, բոլոր դաշտերը կը ջրեն այս հեղուկով. մինչև հինգ տարի կը ջնջուին վնասակար խոտերը և նորէն կը սկսին ծլիլ. և եթէ կ'ուզեմք զանոնք վերստին ջնջել, հարկ է երկրորդ անգամ ջրել զանոնք նոյն հեղանիւթով ։

Փայտը կիզմանէ և միջատաց հարուածներէն պահելու ներկ ։

Որ և իցէ ներկի հետ կրնամք խառնել

Շիպ. alun	60	դրամ
Ծծմբատ կրոյ. sulfate de fer	60	—
Բօսկեբորական թթուուտ.		
Acide Borique . .	30	—
Դոնդող. gélatine . . .	19	—
Շոճ. Empois. (տճ. նշաստա գոլաօը)	6	—
Ջուր	1000	—

այս պատրաստութիւնը քսելով փայտի վրայ, նա անփուտ պիտի մնայ և պիտի չայրի ։

Լեռան որ կայրի յԱւստրալիա ։ Հետաքրքրութեամբ ամենայն ոք կը կարդայ եւրոպական օրագրաց մէջ Աւստրալիոյ լերան մի այրելն ։ Լերան բարձրութիւնն է 550 մետր. կ'երևի թէ իւր հանածխոյ բովերէն մին բռնկած ըլլայ. բայց թէ ի՞նչպէս կրակ առած է այն՝ չի գիտցուիր, և վաղուց է որ այսպէս կ'այրի այն լեռն ։

Փորհարութեան դեղ ։ Փորհարութիւնը շատ անգամ բանի տեղ չի դրուիր, բայց կրնայ սա զմարդ մինչև մահուան դուռն հասցնել, մանաւանդ եթէ մէկը ջերմ եղանակաց մէջ բռնուած ըլլայ սոյն հիւանդութեամբ ։ մի միայն պարզ և ընտրելագոյն դեղն է խառնել դգալ մը ջրոյ մէջ նոյնչափ աւրճ և նոյն օրը անմիջապէս խմել առանց դանդաղելու ։

digitised by A.R.A.R.@